ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ – 90

Սիլվա Կապուտիկյանը հայ գրականության վառ ու ինքնատիպ երևույթներից մեկն է, որի շռայլ տաղանդը հավասարապես դրսևորվեց և՛ քնարերգության, և՛ հրապարակագրության մեջ: Նա բանաստեղծների այն տոհմից է, որի ստեղծագործությունը զգացմունքի և բանականության հրաշալի միաձուլում է, փաստի և երևակայության ներդաշնակություն: Նրա պոեզիան սկզբից ևեթ նվաճեց հազարավոր սրտեր, սիրելի դարձավ տարբեր ազգերի համար: Կապուտիկյանը նոր շունչ ու թարմություն հաղորդեց սիրային քնարերգությանը: Միշտ անկեղծ ու հուզավառ նրա բանաստեղծությունները, թարգմանվելով աշխարհի տարբեր լեզուներով, հարստացրեցին համաշխարհային սիրերգության ոսկե ընտրանին:

Գտնվելով հայ գրական, հասարակական-քաղաքական կյանքի կիզակետում՝ Կապուտիկյանն իր ստեղծագործությամբ ու ազգանվեր գործունեությամբ նպաստեց ազգային ինքնագիտակցության զարթոնքին ու ազգային արժեքների պահպանմանը:

Ծնվել է 1919 թվականին՝ Վանից Երևան գաղթած ընտանիքում: 1933 թ. տպագրված առաջին՝ «Պատասխան Թումանյանին» բանաստեղծությամբ տասնչորսամյա աղջնակը ճանաչվել է բանաստեղծուհի: Առաջին ժողովածուն՝ «Օրերի հետ», լույս է տեսել 1945 թ.: Այդ շրջանի ստեղծագործությունները թեպետ կրում էին ժամանակի գաղափարախոսության կնիքը, այնուհանդերձ ակնհայտ էին երիտասարդ գրողի անմիջականությունն ու զգացմունքայնությունը: Առանձնահատկություններ, որոնք հետագայում տիրապետող դարձան Ս. Կապուտիկյանի ստեղծագործության մեջ: Նրա «Իմ հարազատները» (1952 թ.) բանաստեղծությունների ժողովածուն արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի: Հետագա տարիներին լույս տեսած մյուս ժողովածուներում՝ «Զանգվի ափին» (1947), «Բարի երթ» (1957), «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961), «Յոթ կայարաններ» (1966), «Դեպի խորքը լեռան» (1972), «Իմ էջը» (1968), «Ձմեռ է գալիս» (1983), իմաստավորվում ու առանցքային տեղ են գրավում մտորումն ու խոհը հայրենիքի բախտի, նրա անցյալի ու ապագայի մասին, ընդ որում մշտապես աչքի է զարնում անսահ-

ման սերը հայրենիքի նկատմամբ: Այս առումով առավել բնութագրական են «Խոսք իմ որդուն», «Արարատյան դաշտ», «Խոսք ժողովրդիս», «Մասիսին մոտիկ», «Խոհ Արարատ լեռան առիթով» և հայրենասիրական այլ բանաստեղծություններ, որոնք անչափ սիրվեցին ու տասնամյակներ շարունակ հնչում են իբրև հիմն:

Բացառիկ է եղել Ս. Կապուտիկյանի դերը Հայաստան-Սփյուռք հարաբերությունների սերտացման գործում: Ճամփորդելով արտերկրի գրեթե բոլոր հայկական գաղթօջախներում՝ Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, ԱՄՆ, Կանադա, Բրազիլիա և այլն, Կապուտիկյանն իր տպավորություններն ու խոհերը զետեղել է «Քարավանները դեռ քայլում են» (1964), «Խժանկար հոգու և քարտեզի գույներից» (1976), «Գույներ նույն խժանկարից» (1989), «Հոգու նույն երթուղիներով» (1993) և այլ ուղեգրություններում, որոնք դարձան սփյուռքահայության կյանքն ու հիմնախնդիները պատկերող, հանրագիտարանային արժեք ունեցող եզակի աշխատություններ:

Սիլվա Կապուտիկյանի քաղաքացիական ըմբոստ խառնվածքը ամբողջությամբ դրսևորվեց հրապարակագրության մեջ: Խորհրդային վարչակարգի խեղդուկ ու կաղապարված կարգերի օրոք Կապուտիկյանի հրապարակումներն ուղղված էին մարդու ինքնությունն ու անհատականությունը տրորող ռեժիմի դեմ: Այդ մասին են վկայում նրա համարձակ մի շարք ելույթները՝ «Ելույթ սովետահայ գրողների միության 6-րդ համագումարում» (1971), «Ելույթ մանկան տարվա կապակցությամբ» (1979) և այլն: Ս. Կապուտիկյանը ամբողջ հոգով ընդդիմանում էր ամենայն կեղծիքի ու անօրինության՝ իր մտահոգություններն ու տագնապները համարձակորեն հնչեցնելով ամենաբարձր ամբիոններից: Հասարակական-քաղաքական տարբեր երևույթների հանդեպ նրա սկզբունքային դիրքորոշումները, հասարակության արատավոր երևույթները քննադատող հրապարակումներն ու ծրագրային ելույթներն ամփոփված են «Իմ ժամանակը» (1979), «Էջեր փակ գզրոցներից» (1997), «Չեմ կարող լռել» (2000), «Վերջին զանգ» (2006) հրապարակախոսական ժողովածուներում:

Սիլվա Կապուտիկյանը նաև հրաշալի մանկագիր է: «Փոքրիկ Արա, ականջ արա», «Մեր Լալիկը, սիրունիկը» և մանկական մի շարք այլ ժողովածուներում ամփոփված նրա գողտիկ բանաստեղծությունները սերունդներ են կրթել ու դաստիարակել՝ շարունակելով սիրելի ու հարազատ մնալ նաև այսօր:

Սիլվա Կապուտիկյանն արժանացել է բազմաթիվ պարգևների, շքանշանների ու մեդալների՝ մեծագույն պարգևը, սակայն, համարելով իր ժողովրդի սերն ու նվիրումը, որի կենսական մեծ ուժին, արարելու, ստեղծելու ձիրքին անվերապահորեն հավատում էր բանաստեղծուհին:

Սիլվա Կապուտիկյանն իր հայաշունչ ստեղծագործությամբ, հայ ժողովրդի հանդեպ անսահման սիրով ու նվիրումով, ազգանվեր գործունեությամբ վաստակեց Ամենայն հայոց բանաստեղծուհին լինելու պատիվը:

Շատ սիրելի Սիլվային.

Չլիներ ծովը, երկնքի պատկերը երկրի վրա չէր լինի, չլիներ քո պոեզիան, ինչ-որ տեղ խավար կլիներ մեր երկիրը: Եղի՛ր հավատարիմ մեր ժողովրդի իղձերին:

Սրտի բոլոր ջերմությամբ՝

Ավետիք Իսահակյան

Վասպուրական աշխարհից ժառագած, Սիլվա Կապուտիկեան մեր Մայր Հայաստանի երկնակամարի վրայ աւելի քան կէս դար շողացող պայծառ աստղերից մէկն է, իբրեւ հայաշունչ բանաստեղծ, իբրեւ արդարակորով հրապարակախօս եւ հայրենի պետութեան հաւատարիմ քաղաքացի:

Կեանքի եօթանասուն տարիների սեմին մենք օրհնում ենք նրա ոգեզրահ վաստակը ու մաղթում նրան մշտանորոգ ստեղծագործ եռանդ եւ իրականացում նրա լոյս երազանքներին:

Վազգեն Ա
Ամենայն հայոց կաթողիկոս

Մեր սիրելի, անզուգական Սիրվարդ.

Մեր մեծ, հանճարեղ ժողովրդի զավակն ես դու, ամբողջովին ծնված մեր հողից, սնված մեր արմատներից, մեր տանջանքներից ու ուրախություններից, այն ժողովրդի, որը երբեք չի տիրել, չի տրորել, այլ տրորված լինելով, շարունակել է շտկել իրանը, բարձրացնել գլուխը և նորից նայել արևին, նորից ստեղծել է, ստեղծել, ստեղծել... Ապրիր, ստեղծիր, բարձր պահիր մեր Մեծ ժողովրդի անունը, նրա իդեալները, նրա արդար դատի իրավունքը:

Մարտիրոս Սարյան

Հարգելի Սիլվա Բարունակի

Ի սրտե ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ փառապանծ հոբելյանի առթիվ: Վաղուց լինելով Ձեր բանաստեղծական ինքնատիպ տաղանդի երկրպագու՝ անանց հաճույքով կարդում եմ Ձեր խորաթափանց բանաստեղծությունները և վառ ակնարկները

նվիրված մեր ժողովրդի կենսուրախության, լավատեսության հաստատմանը, նոր կյանքի վերածննդին, ներծծված են խորաթափանց մտքերով և առաքինի զգացմունքներով...

Հաջողություններ եմ մաղթում Ձեզ և ցանկանում Ձեր սքանչելի բանաստեղծական տաղանդին արժանի նոր արարումներ:

Սովետական Միության մարշալ՝ Հ. Բաղրամյան

Ժողովուրդը գիտի, թե ում է հարգում ու սիրում՝ անկախ տարիքից: Նա իր զավակներին գնահատում է նրանց գործով: Մանավանդ մենք, մեր ակադեմիայում, խորապես գիտակցում ենք Ձեր մեծ ավանդը հայ բանաստեղծության գանձարանում և Ձեր դերը հասարակական կյանքում:

Ակադեմիայի անունից և հենց իմ անունից Ձեզ ենք հղում մեր ամենաջերմ, անկեղծ շնորհավորանքները:

Մեր գլխից միշտ անպակաս լինեք:

Ձեր՝ Վիկտոր Համբարձումյան

Ինչ իմանայի, որ աշխարհ կգամ ու կդառնամ ժամանակակիցն ու վկան մի երևույթի, որ այդպես էլ կկոչվի՝ Սիլվա: Երևույթ՝ այդքան շռնդալից, այդքան հորդառատ, բազմադեմ, երևույթ ամեն ինչի՝ կրակոտ բանաստեղծի, սրտակտոր երգչի սիրո, լայնաշունչ արձակագրի, աննկուն հայրենասերի, բոցաշունչ հրապարակախոսի, խաղաղության, համերաշխության անխոնջ մունետիկի. երևույթ, որում ձուլվում, նույնանում են ու դառնում են համահնչուն մի ամբողջ շարք կապակցություններ՝ Սիլվա-հայրենիք, Սիլվա-եղեռն, Սիլվա-սփյուռք, Սիլվա-Ղարաբաղ... Սիլվա-երևույթը գալիս է հաստատելու մեկ անգամ ևս, որ այս ժողովուրդը չի սպառել իրեն և մտադիր էլ չէ սպառելու, որ նա ունակ է հավերժ շարժիչի պես ստեղծելու արժեքներ ու դրանով էլ շքեղացնելու այս աշխարհն ու մոլորակն այս հողածին:

Գրիգոր Գուրզադյան

Սիրում եմ քեզ, որովհետև խոսքդ ժողովրդիս երգի պես ջերմ է, անկեղծ, հուզող ու արդար:

Քո՝ Թաթուլ Ալթունյան

Սիրելի Սիլվա Կապուտիկյան

«Կարավաններով» Դուք գրած եք մեծապես թանկագին գիրք մը, որուն առթիվ պետք չէ վարանիլ գործածելու դրվատանքի ամենեն լեցուն տարազները: Ընթերցողը, որ եմ, և որ դժվարահաճի իր համբավը ուրիշեն չէ շորթած, պիտի ուզեր չափազանցներ իր ներբողները, զանոնք լավագույնս լսելի ընելու համար: Առաջին անգամն է, որ Ձեզ կկարդամ և կխոստովանիմ, որ կարելի չէ պաղարյունությամբ խոսել գիրքի մը վրա, որ ընթերցողը կալեկոծե, կխռովե և ներքին փլուզումի ծայրավիճակներուն կհաս-

ցունե: Անզուգական իր տեսակին մեջ ան կպարզե զգացական և իմացական աշխարհ մը, որ ձիրքերով հարուստ գրիչովը միայն կրնա գալ: Սփյուռքի ամբոխները երբ Ձեզ կընդունեին սիրազեղ խանդավառությամբ, Դուք գիտեիք, որ այդ սերը ավելի կուղղվեր Ձեր ներկայացուցած արժեքին, այսինքն Հայաստանին, քան թե բուն իսկ Ձեր անձին: Անկարելի բան է, որ սիրո կարևոր տեղափոխություն մը չպատահի հիմա, որ «Կարավանները» նետված են նժարին մեջ: Գրական տաղանդին հետ զուգընթաց՝ Դուք կպարզեք առօրյա այնպիսի հատկություններ և ձիրքեր, որ հազվագյուտ են գրքի մարդոց մոտ: Պերճասաց, լեզվանի և պատրաստաբան, Ձեր անձեն կձառագե մագնիսական խորունկ ալիք մը, որ գիտե ամբոխները գրավել...

Հավատացեք, սիրելի տիկին, իմ ամենաջերմ զգացումներուն:

Շահան Շահնուր

Ինքնավար, անկախ, թարմ ու նոր բանաստեղծ է Սիլվա Կապուտիկյանը... Նա կատարյալ բանաստեղծ է, այսինքն՝ ժամանակակից մտածողությամբ բանաստեղծ:

...Նա չի կանգնել ժողովրդի հոգու բորբոք վառարանի մոտ՝ կազմ ու պատրաստ, ձղոտված փայտերի խտիտը գրկին, որ մեկ-մեկ կրակի մեջ նետի՝ իր սեփական դեմքը լուսավորելու համար: Ոչ, այսպես չեն բոցավառվում նրա «Մտորումները»: Նա ինքն է նախ քարածխացել՝ վառվել անթվածին, ու միայն դրանից հետո բոցավառվել:

...Նա շարունակում է մեր մեծ նախորդների գործը, և ոչ թե կրկնում նրան: Նա ստեղծում է, և ոչ թե աշխատում դուր գալ: Նա դելֆինի պես նավի առջևից է լողում և ոչ թե ետևից: Նա չի քծնում ժողովրդին, այլ սիրում է և որովհետև սիրում է՝ ձգտում է բարձրացնել նրան:

Պարույր Սևակ

Սիլվա Կապուտիկյանն այն հազվագյուտներից է, որ բանաստեղծական արվեստի սեմից ներս մտավ ոչ իբրև սկսնակ: Նրա հենց առաջին գիրքը՝ «Օրերի հետ»-ը, հասուն բանաստեղծի գործ էր: Նրա մեջ ամփոփված բանաստեղծություններից հատկապես մեկը՝ «Կլեոպատրան», ոչ միայն հիացնում է ինձ, այլ զարմացնում: Ինչպես է 20-ամյա աղջիկը կարողացել բաց անել կնոջ հոգեբանության այնպիսի ծալքեր, այնպիսի խորհրդատվություններ, հասնել փիլիսոփայական այնպիսի ընդհանրացման, որի համար միայն բանաստեղծական վառ տաղանդը քիչ էր, պետք էր ունենալ նաև հասուն, ամեն ինչ տեսած կնոջ կենսափորձ: Եվ հակված եմ կարծելու, որ այդ կենսափորձին այս դեպքում փոխարինել են բնազդն ու ենթագիտակցությունը, որոնք առհասարակ բոլոր իսկական բանաստեղծությունների առաջին և ամենահուսալի աջակիցներն են:

Վահագն Դավթյան

Բանաստեղծությունները Հայաստանի մասին նման են խաչքարերի... Եվ ահա Հայաստանի մասին Ձեր գրած բանաստեղծություններում առկա է խաչքարերի կարծրությունը, և նրանց նախշերի ու գրերի գեղեցկությունը, և նրանց զարմանալի, անկրկնելի մաքրությունն ու սրբությունը:

Ֆ. Աբրամով

Սիլվա Կապուտիկյանն անհանգիստ բնավորության բանաստեղծ է, աշխարհի իրադարձությունների և կյանքի խլրտուն շարժման նկատմամբ խոր հետաքրքրության բանաստեղծ: Բայց նրան, բնականաբար, ամենից շատ ու ամենից խոր հուզում է Հայաստանը, որի մշակույթն ու պատմությունը զարմացնում են քարից հաց ու գինի քամող ժողովրդի համառությամբ ու կենսական ուժով: Հայաստանը իր բոլոր տագնապներով ու իր ամբողջ հիասքանչությամբ Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծությունների էության մեջ է: Սիլվա Կապուտիկյանի ճանապարհը լեռան գագաթ տանող ճանապարհ է, որ նա քայլ առ քայլ բացել է իր ջանքերով: Այդ ճանապարհը ստուգված-ճշտված է մտորումների ու ողբերգությունների գնով և կարեկցանքի մեծ ունակությամբ, որ իսկական արվեստագետի մենաշնորհն է:

Միխայիլ Դուդին

...Մնալով մենակ Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծությունների հետ՝ ես կարծես թե մենակ, դեմ-դիմաց եմ մնում խղճի ու սիրո հետ մի մարդու, որին թանկ է ամեն բան, ինչ արժանի է հարգանքի, թանկ են բոլոր սրտակցությունները երկրի վրա: Ես կարծես ձեռքով շոյում եմ հայոց հողի քարն ու խոտը, լանջերի ձյունն ու ընկույզների կանաչը... Ես սիրում եմ արիությունն ու իմաստությունը այդ կնոջ, որի աչքերը ինձ են նայում ասես հայոց պատմության դրամատիկ, բայց գեղեցիկ խորքերից:

Կայսին Կուլիև